Հավելված
Աբովյան համայնքի ղեկավարի
2026 թվականի
հուլիսի 27–ի N 3611 որոշման

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի **անձնակազմի կառավարման և տեղեկատվության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-48) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**

Թափուր պաշտոնը առաջացել է 2026 թվականի մարտի 16-ին «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 23-ի N 336-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի մարտի 05-ի N 530-Ա հրամանի հիմքով:

Թափուր պաշտոնի անձնագիրը, մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը, հարցազրույցի փուլի հարցաշարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը ներկայացված են հետևյալ հղումով՝ https://abovyan-kotayk.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1356

Մրցույթին մասնակցելու համար դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք բնօրինակների հետ միասին, պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում (**լրացվում է տեղում**),
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի, իսկ փախստականի դեպքում՝ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն,
3) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի (ատեստատ, դիպլոմ) պատճեն,
4) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն (առկայության դեպքում),
5) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բոլոր լրացված էջերով,
6) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
7) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել

ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը (**լրացվում է տեղում**),

8) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ (**լրացվում է տեղում**),

9) հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ (**լրացվում է տեղում**),

10) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին (**լրացվում է տեղում**):

Դիմումը լրացնելու ժամանակ ներկայացված՝ անձը հաստատող, կրթությունը, զինվորական ծառայության հետ առնչությունը, աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են դիմողին՝ դիմումն ընդունելուց հետո:

**Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 369 000 (երեք հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ:**

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **10.08.2026թ**.:

Մրցույթը կկայանա **2026 թվականի սեպտեմբերի 04-ին ժամը 10:00-ին** Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի շենքում՝ 2-րդ հարկ, նիստերի դահլիճում (ք. Աբովյան, Բարեկամության հր-1):

Փաստաթղթերն ընդունվում են Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմում (ք. Աբովյան, Բարեկամության հր-1, հեռ. 060 53-64-41, 060 53-64-27, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am) կամ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն / ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, վարչական շենք, հեռ. /0223/ 2-73-01, էլ. հասցե kotayq@mta.gov.am) ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: